ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՌԵՎՏՐԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 5. Պալատների գործառույթները

1. Պալատները՝

ա) պետական և ոչ պետական մարմիններում, հիմնարկներում և կազմակերպություններում ներկայացնում և պաշտպանում են իրենց անդամների օրինական շահերը.

բ) վարում են Հայաստանի Հանրապետության այն առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ոչ պետական գրանցամատյանը, որոնց ֆինանսատնտեսական վիճակը վկայում է հանրապետության տարածքում և օտարերկրյա պետություններում ձեռնարկատիրական գործունեության տեսանկյունից որպես գործընկեր նրանց վստահելիության և բարեհուսության մասին.

գ) հայրենական և օտարերկրյա առևտրային կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի դիմումի հիման վրա անցկացնում են ապրանքների անկախ փորձաքննություն, դրանց որակի, քանակի և կոմպլեկտայնության վերահսկողություն և ստուգում ու օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում դրա արժանահավատության համար.

դ) աջակցություն են ցույց տալիս հայրենական և օտարերկրյա առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին գյուտերի, ~~օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների~~ արդյունաբերական դիզայնի, նշանների, սպասարկման նշանների և ապրանքների ծագման վայրերի անվանումների գրանցման, ինչպես նաև ցուցահանդեսներին մասնակցելու գործում.

ե) մշակում են գործարար ծրագրեր.

զ) ստեղծում են տեղեկատվության ապահովման տվյալների բանկ.

է) կազմակերպում և մասնակցում են ցուցահանդեսներին և տոնավաճառներին Հայաստանում և արտասահմանում.

ը) օրենսդրությամբ սահմանված կարգով հիմնում և հրատարակում են թերթեր, ամսագրեր և այլ տպագիր նյութեր.

թ) իրականացնում են օրենսդրությանը չհակասող և իրենց կանոնադրական խնդիրներից բխող այլ գործառույթներ:

2. ԱԱՊ-ները կարող են ՀՀ ԱԱՊ-ի միջոցով մասնակցել ձեռնարկատիրական գործունեությունը կարգավորող օրենքների և իրավական այլ ակտերի նախագծերի մշակմանը: